

«Հաստատում եմ»

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական

համալսարանի ռեկտոր Ե. Մերոջյան

« 27 » հունվարի 2023թ.



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Մերի Սամվելի Եսայանի «Անզլերեն գիտական տեքստերի թարգմանության ուսուցման մեթոդիկան մասնագիտական կողմնորոշման դասընթացում» թեմայով ԺԳ.00.02-«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անզլերեն լեզու)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Արդի շրջանում, երբ անզլերենը դարձել ու շարունակում է մնալ որպես գիտական գրականության հիմնական լեզու, առավել արժևորվում է սույն հետազոտությունը, որովհետև այն միտված է ոչ լեզվական բուհերում ուսանողի մոտ թարգմանական կարողությունների զարգացմանը: Հետազոտության սահմաններում առաջարկվում է գիտական տեքստերի և վարժությունների մի կոտ համակարգ, որ ենթադրում է զարգացնել ուսումնառողների մոտ ինչպես մասնագիտական հաղորդակցական, այնպես էլ մեդիատիվ կոմպիտենցիաները թարգմանության ոլորտում: Անմիջապես նշենք, որ այն ատենախոսին հաջողվել է: Եվս մեկ արժևորում՝ հետազոտության հիմնախնդրի լուծումը իրականացվում է միջգիտակարգային կապերի /հոգեբանություն, հաղորդակցություն, հանրալեզվաբանություն/ դիտակետում, իսկ թարգմանության գործընթացն էլ դիտվում է որպես միջմշակութային հաղորդակցություն:

Աներկբայելի ճշմարտություն է հեղինակի այն պնդումը, որ նեղ մասնագիտական ոլորտի ուսումնառողների անզլերեն լեզվի դասավանդման գործընթացում դժվարըմբռնելի է դառնում օտար լեզվով մասնագիտական տեքստի բովանդակությունից քաղված նյութի հաղորդումը մայրենի լեզու: Այս հարթակում հետազոտության առանցքն է դառնում գիտական տեքստը, մասնակիորեն գիտատեխնիկական տեքստերի լեզվառճական, քերականական /ձևաբանական ու շարահյուսական/ առանձնահատկությունները՝ որպես ինքնատիպ ամբողջության կերտվածք: Հստակորեն ուրվագծված են աշխատանքի նպատակը և առաջադրվող խնդիրները, որոշարկված է աշխատանքի կառուցվածքը, որում առաջադրվող հարցերի փունջը իր տրամաբանական լուծումն է գտնում հաջորդող խնդիրների բանաձևման մեջ:

Գիտատեխնիկական տեքստի լեզվառճական առանձնահատկությունների որոշարկման համար նախ և առաջ գիտական ոճը դիտարկվում է գեղարվեստական

ոճի հարթությամբ՝ ընդհանուր ու տարբերակիչ զծերը սահմանելու նպատակով և հաջորդ քայլում այն մեծ ծավալայնությամբ քննության է առնվում իր ներքին բաղադրիչների և դրանցում իշխող հարաբերությունների ամբողջական կերտվածքում: Բացի իր ինքնատիպ բովանդակությունից գիտատեխնիկական տեքստը առանձնանում է նաև իր բառապաշարի բազմաշերտությամբ, մասնավորապես տերմինների մեծ գործածությամբ, որոնք դժվարացնում են տեքստի բովանդակության ընկալումը և դրա համարժեքումը հայերեն: Մեծ կարևորություն ունի հետազոտության այն մասը, որի շրջանակներում վերծանվում են եզրույթի բառակազմական կաղապարումները՝ նախածանցների և վերջածանցների դերը դրանց բանաձևման գործում / Ատ. էջ 28-29/: Բառակազմության կաղապարումների ուրվագծումը հենքային գիտելիքների աղբյուր է դառնում ուսանողի համար, որն էլ իր հերթին նպաստում է թարգմանության ժամանակ ճիշտ համարժեքի ընտրությանը:

Պարզ եզրույթի կաղապարմանը հաջորդում են բարդ եզրույթները, որոնք առանձնակի դժվարացնում են թարգմանության գործընթացը, քանի որ թիրախ ու սկզբնաղբյուր լեզուներում բարդ բառերի բանաձևումը կատարվում է կապակցելիության սկզբունքով: Բառապաշարի քննությունը համալրվում է գիտական լեզվի ձևաբանական ու շարահյուսական յուրահատկություններով: Անվիճելի է հեղինակի այն պնդումը, որ ուսուցման նախնական փուլում ուսանողը պետք է ունենա նեղ մասնագիտական գիտելիքներ կառույցների իմաստագործառական առանձնահատկությունների ու դրանց թարգմանելիության հնարների մասին:

Աշխատանքի առավել հետաքրքրական բաժիններից է մեղիատիվ կոմպլիտենցիայի զարգացմանը միտված մեթոդական համակարգը, որ փորձարկվել է ուսուցման ընթացքում: Փորձարկման ժամանակ կարևորվել է տեքստի ճիշտ ընտրությունը, ուսանողի լեզվական գիտելիքները, մասնագիտական թարգմանություն կատարելու նրա կարողությունը, ինչպես նաև օտար լեզվով հաղորդակցվելու նրա ունակությունը: Փորձարարական դաշտի արդյունքները հուսալի են:

Եվ այսպես, աշխատանքի շրջանակներում ներկայացված վարժությունների համակարգը, որի հիմքում ընկած է մուլտիմեդիայի մեթոդը, կարող է հետագայում իր կիրառությունը գտնել ոչ լեզվական բուհերում ձեռնարկների, ծրագրերի ստեղծման համար: Այնուհանդերձ, կուզենայինք անել մի քանի դիտարկումներ.

- Դիտվեցին որոշակի շարժումներ տերմինաբանական կապակցությունների գործածությունում: Այսպես օրինակ՝ բարդ բառակազմական կառուցվածք /կառույց/, լեզվաբանական կոնտեքստ /լեզվական համատեքստ/, հասարակ բառեր /ընդհանուր գործածության բառեր/, շարահյուսական կառուցվածք /այս դեպքում՝ կառույց / և այլն:
- Կուզենայինք արտահայտել անհամաձայնություն հեղինակի որոշ պնդումների հետ: Օրինակ՝ ատենախոսության էջ 18-ում, կարդում ենք «Միջմշակութային հաղորդակցությունը իրականանում է բանավոր խոսքի օգնությամբ, ապա նույնը չի կարելի ասել գիտության ասպարեզում»: Այս պնդումը դառնում է մտայնության առարկա, քանի որ ինչպես ցանկացած տեքստ, գիտական

տեքստը հաղորդակցություն է, մանավանդ, որ այն դիտվում է թարգմանության մեջ՝ սկզբնաղբյուր ու թիրախ լեզուների դաշտում:

Տարակուսալի է նմանապես Մերի Եսայանի այն պնդումը, որ անգլերեն գերունդին հայերենում համարժեքվում է *-ք, -ում* վերջավորություններով /թռիչք, բախում/: Մա դիտվում է այն դեպքում, երբ գերունդին նախադասության մեջ կատարում է ենթակայի գործառույթ, բայց և այն չի կարելի համարել օրինաչափ իրողություն /Ատ էջ 41/: Համակարծիք չենք նաև հեղինակի այն համոզմանը, որ Participle I-ը նախադասության մեջ չի կարող հաղես գալ ստորոգյալի գործառույթով: Այս դերբայը to be օժանդակ բայի հետ գործածվում է որպես բայական ստորոգյալ:

- Վերլուծությանը համակարգայնություն հաղորդելու համար թերևս տեղին կլիներ անդրադառնալ նմանապես այն բարդությունների թարգմանությանը, որոնք կադապարվում են օրինակ՝ «գոյական+գոյական» խոսքի մասերով, սակայն նախադասության մեջ ներկայանում են որպես որոշիչ: Նման բանաձևումները կարող են դժվարությունների պատճառ դառնալ թարգմանության ժամանակ:

Սակայն վերոհիշյալ դիտարկումները չեն նսեմացնում աշխատանքի արժեքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մերի Սամվելի Եսայանի «Անգլերեն գիտական տեքստերի թարգմանության ուսուցման մեթոդիկական մասնագիտական կողմնորոշման դասընթացում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր ԺԳ.00.02-«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անգլերեն լեզու)» թվանիշին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2023թ. 27.02 «Օտար լեզուներ և գրականություն» ամբիոնի թիվ 13 նիստում:

Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ,

Բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր՝

Ա. Հովհաննիսյան

Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ Ա. Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԾՊՀ-ի գիտքարտուղար՝

Կ. Ռեարոյան

27.02.2023թ.